



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԶՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
Էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/173

«20» Հունիսի 2019թ.

ՀՀ Լոռու մարզպետ
Պ-ն Ա. Ղուկասյանին

Հարգելի պարոն Ղուկասյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ
համայնքի ղեկավարի 2019թվականի հունիսի 20-ի թիվ 33-Ա և 34-Ա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

ԶՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
Էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » Հունիսի 2019 թվականի N 33-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԻԴԱ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԱԿՈՔՅԱՆԻՆ ՁՈՐԱԳԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆԵԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և Ձորագետ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 19-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 10-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լիդա Մարտիրոսի Հակոբյանի 2019 թվականի հունիսի 19-ի հայտը՝

Որոշում եմ.

1. Անհատ ձեռնարկատեր Լիդա Մարտիրոսի Հակոբյանին /ՀՎՀՀ 66907254/ տալ գ. Ձորագետ 1փողոց թիվ 82 հասցեում գործող 26քմ մակերեսով խորտկարանում (հիմնական շինություն) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2019թվականի համար՝ ըստ եռամսյակների:
2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
2019 թ. հունիսի 20
հ. Ձորագետ



Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե գ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
Էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» հունիսի 2019 թվականի N 34-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԼԻԴԱ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԱԿՈՔՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ
ԱԼԿՈՆՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 4-րդ կետի և Ձորագետ համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 19-Ն որոշման հավելվածի՝ 1-ին կետի 7-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Լիդա Մարտիրոսի Հակոբյանի 2019 թվականի հունիսի 19-ի հայտը՝

Որոշում եմ.

1. Անհատ ձեռնարկատեր Լիդա Մարտիրոսի Հակոբյանին /ՀՎՀՀ 66907254/ տալ գ. Ձորագետ 1փ. թիվ 82 հասցեում գտնվող 26 քմ մակերեսով խորտկարանում (հիմնական շինություն) ոգելից և ակոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2019 թվականի համար՝ ըստ եռամսյակների:
2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը ըստ եռամսյակների և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2019 թ. հունիսի 20

հ. Ձորագետ



Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ